ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

(25 փետրուարի 2021 թ.)

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, տեղեկանալով բարձրագոյն հրամանատարական կազմի եւ դրան յաջորդած ՀՀ վարչապետի յայտարարութիւններին, խոր մտահոգութեամբ հետեւում է դրանց շուրջ ընթացող զարգացումներին։ Յետպատերազմեան ճգնաժամային այս իրավիճակում, երբ հայրենիքը դիմագրաւում է քաղաքական, տնտեսական եւ հասարակական բազմաթիւ մարտահրաւէրների, մեղադրանքների եւ քաղաքական հաշուեյարդարների չընդհատուող կոչերը վտանգում են ազգային միաբանութիւնն ու անվտանգութիւնը։

Մայր Աթոռն անթոյլատրելի եւ կործանարար է համարում իրավիճակի յետագայ սրումը՝ կոչ անելով մեր ժողովրդին դրսեւորել խոհեմութիւն եւ պատասխանատուութիւն, չտրուել սադրանքներին եւ զերծ մնալ քաղաքացիական բախումներից։

Մայր Աթոռը յորդորում է ՀՀ նախագահին, վարչապետին, Ազգ նախագահին, կառավարութեան անդամներին եւ բոլոր քաղաքական ուժերի առաջնորդներին ստեղծուած ծանրագոյն իրավիճակից ելքեր փնտրել բանակցային սեղանի շուրջ՝ ի սէր մեր հայրենիքի եւ ժողովրդի։

Թող Ամենախնամ Աստուած Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ խաղաղութեան եւ անդորրի մէջ պահի մեր հայրենի պետութիւնն ու մեր ժողովրդին։